



**<<Սևանի Խ. ԱՔՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>**

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ** առարկա՝  
Գերմաներեն

ԹԵՄԱ՝ Ուսուցման ժամանակակից մեթոդները և ՏՀՏ-ն որպես օտար  
լեզուների դասավանդման կարևորագույն գործիքներ

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ՝ Մերի Մելքունյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի  
Ճամբարակի Մ. Քոչարյանի անվան N2 հիմնական դպրոց  
ՎԵՐԱՊԱՏՐԱՏՈՂ՝ Զուլիետա Հակոբյան

Ք.Սևան

2022

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3-4
Գլուխ 1. Ուսուցման ժամանակակից մեթոդները.....	4-5
1.1. Պասսիվ մեթոդ.....	5-6
1.2. Ակտիվ մեթոդ.....	6-7
1.3. Ինտերակտիվ մեթոդ.....	7-8
1.4. Նախագծային մեթոդ.....	8-10
Գլուխ 2. Տեղեկատվական տեխնոլոգիաները՝ որպես օտար լեզուների դասավանդման կարևորագույն գործիքներ.....	11-14
2.1. Տարրական կրթության ինֆորմատիզացիայի հիմնական ուղղությունները.....	14-15
2.2. .ՏՀՏ-ների օգտագործման հիմնական առանձնահատկությունները, որոնք կօգնեն ուսուցչին դասի ժամանակ ստեղծել բարենպաստ պայմաններ և հասնել նյութի յուրացման բարձր մակարդակի.....	15-16
2.3. .ՏՀՏ-ի օգտագործումը դասի տարբեր փուլերում.....	16
2.4. Մեդիադասերը օգնում են լուծել հետևյալ դիդակտիկ խնդիրները.....	16-17
2.5. Մեդիատեխնոլոգիաները կարող են օգտագործվել.....	17
Եզրակացություն.....	18-19
Գրականության ցանկ.....	20

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Դիտարկենք այն, երբ արտաքին աշխարհից տեղեկատվություն ենք ստանում, այն սկզբում ամենչվում է մեր կարճաժամկետ կամ աշխատանքային հիշողությանը: Որպեսզի կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ, մեզ պետք է ուշադրության կենտրոնացում: Ուշադրությունը կարևոր է ոչ միայն ուսուցման համար, այլև այսօր համարվում է մարդու կյանքի կարևորագույն ռեսուրսը: Համենայնդեպս, բիզնես ընկերությունները հասկացել են, որ մարդու վրա ազդելու համար առաջնայինը նրա ուշադրությունը գրավելն է: Եթե կարողանաք մարդու ուշադրությունը գրավել, ապա կարող եք տիրանալ նրա ժամանակին ու ազդել նրա վրա: Ժամանակակից կրթության մեծագույն խնդիրներից մեկն այն է, որ աշակերտների ուշադրությունը գրավված է տարբեր սոցիալական ցանցերի տեսակների կողմից: Եվ այդ մրցակցության մեջ կրթությունը պարտվողի դերում է: Մարդկային ապրելակերպում ընդունված է, որ ի տարբերություն չափահասների՝ երեխաները ոչնչով զբաղված չեն: Հետևաբար՝ նրանք պետք է պարապեն, սովորեն: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը: Այստեղ մեզ ուսուցիչներին, օգնության են գալիս տեղեկատվական տեխնոլոգիաները, որոնք մենք օգտագործում ենք հոգուտ դասապրոցեսի: Չեն կարող չնշել նաև ուսուցման ժամանակակից մեթոդները, որոնք պակաս դրական գործունեություն չեն ծավալում ուսուցչի աշխատանքում:

Մեթոդները բազմազան են, պետք է կարողանալ այնքան հմուտ լինել, որպեսզի դասապրոցեսի յուրաքանչյուր բնագավառի համար գտնել իր յուրովի մեթոդը: Կրտսեր և հիմնական դպրոցում ուսումնական պրոցեսի կազմակերպման փորձը SՀS-ների օգտագործմամբ նկարագրված մոդելով թույլ է տալիս խոսել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և ուսուցման այլ միջոցների համադրման արդյունավետության բարձր մակարդակի մասին, որը ենթադրում է իմացություն գործունեության միջոցով: Այն սովորողների ուսուցման կազմակերպական ձևերի, բովանդակության, մեթոդների փոփոխման երկար և շարունակական պրոցես է, ա՛յն սովորողների, ովքեր ապրելու և աշխատելու են անսահմանափակ ինֆորմացիայի մուտքի պայմաններում:

Հետևաբար՝ այսօրվա դասապրոցեսում պարզապես անհրաժեշտություն է ուսուցման ժամանակակից մեթոդների և SՀS-ի համագործակցությամբ դասի

ստեղծումը, վարումը և ակնկալվող վերջնարդյունքը:

## Գլուխ 1

### Ուսուցման ժամանակակից մեթոդները

Ուսուցման մեթոդը<sup>1</sup>, ինչպես գիտենք, փոխներգործուն գործընթաց է ուսուցչի և աշակերտի միջև, ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի, հմտությունների և կարողությունների փոխանցում ու յուրացում: Վերջինս ուսուցանվող նյութի ընկալումն է, կարճաժամկետ փոխազդեցությունն է դասավանդողի և աշակերտի միջև՝ ուղղված կոնկրետ գիտելիքի, հմտության և կարողության փոխանցմանն ու յուրացմանը:

Ավանդույթի համաձայն՝ մանկավարժության ուսուցման ՄԵԹՈԴՆԵՐԸ դասակարգվում են 3 խմբի.

Բանավոր, տեսողական, գործնական :

Ուսուցման պրակտիկայում գոյություն ունեն և այլ մոտեցումներ՝ դասակարգելու ուսուցման մեթոդները, որոնք հիմնված են մատուցվող նյութն ընդունելու գիտակցականության աստիճանի վրա՝ պասսիվ, ակտիվ, ինտերակտիվ, էվրիստիկական և այլն: Այս բաժանումները հետագա հստակեցման կարիք ունեն, քանի որ ուսուցման գործընթացը չի կարող լինել պասսիվ, ու նաև միշտ չէ, որ այն սովորողների համար իրենից հայտնագործություն է ներկայացնում:

#### 1. Պասսիվ մեթոդ

---

1

[https://hy.wikipedia.org/wiki/%D5%88%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6\\_%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80](https://hy.wikipedia.org/wiki/%D5%88%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6_%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80)

## Ուսուցման պասսիվ մեթոդ


Պասսիվ մեթոդը սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև է, որտեղ դասավանդողը գլխավոր դերակատարն է և դասի ընթացքի ղեկավարը, իսկ սովորողները պասսիվ լսողի դերում են և ենթարկվում են ուսուցչի հրահանգներին: Սովորողի և դասավանդողի կապը պասսիվ ուսուցման տարբերակում պահպանվում է հարցումների, ստուգողական աշխատանքների, թեստերի միջոցով: Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների և սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման տեսանկյունից՝ ուսուցման պասսիվ մեթոդը համարվում է ամենից անարդյունավետը, սակայն, այնուամենայնիվ, այն ունի մի շարք առավելություններ: Այն ուսուցչից պահանջում է թեթև նախապատրաստություն դասի ընթացքին և տալիս է համեմատաբար մեծ ծավալով ուսումնական նյութի մատուցման հնարավորություն դասի սահմանափակ ժամանակահատվածում: Հաշվի առնելով այս մեթոդի նմանատիպ առավելությունները՝ շատ դասավանդողներ պասսիվ մեթոդը նախընտրում են այլ մեթոդներից: Հարկ է նշել, որ որոշ դեպքերում այս մոտեցումը իրեն արդարացնում է փորձառու մասնագետի պարագայում, հատկապես, երբ սովորողներն ունենում են հստակ նպատակ՝ ուղղորդված առարկայի մանրակրկիտ ուսումնասիրմանը: Դասախոսությունը պասսիվ ուսուցման ամենից տարածված ձևն է: Այս մեթոդը լայն տարածում ունի բուհերում, որտեղ սովորում են չափահաս, լիրաժեք ձևավորված անհատներ, որոնք սովյալ առարկան խորությամբ ուսումնասիրելու հստակ նպատակ ունեն:



## 2. Ակտիվ մեթոդ

### Ուսուցման ակտիվ մեթոդ

Ակտիվ մեթոդը սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձևն է, որտեղ դասավանդողը և սովորողը փոխազդում են միմյանց վրա կրթական գործունեության պրոցեսում, և սովորողներն այստեղ ոչ թե պասսիվ ունկնդիրներ են, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Եթե պասսիվ ուսուցման դեպքում գլխավոր դերակատարը և հիմնական հրահանգավորողը դասավանդողն է՝ ուսուցիչը, ապա այստեղ սովորողն ու դասավանդողը հավասար իրավունքների դաշտում են: Եթե պասսիվ ուսուցմանը բնորոշ է ավտորիտար ոճը, ապա ակտիվ մեթոդների դեպքում նախապատվությունը տրվում է դեմոկրատական (ժողովրդավարական) ոճին: Շատերը հավասարության նշան են դնում ակտիվ և ինտերակտիվ մեթոդների միջև, սակայն, չնայած իրենց ընդհանրությանը, այս մեթոդներն ունեն նաև տարբերություններ: Ինտերակտիվ մեթոդները կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձև:



### 3. Ինտերակտիվ մեթոդ


#### Ուսուցման ինտերակտիվ մեթոդ

Ինտերակտիվ- նշանակում է փոխներգործել, գտնվել ինչ-որ մեկի հետ երկխոսության մեջ: Այլ կերպ ասած՝ եթե ակտիվ մեթոդների դեպքում փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում սովորողները և դասավանդողը, ապա ինտերակտիվ մեթոդների դեպքում սովորողները փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում նաև միմյանց հետ, և ուսուցման պրոցեսում գերակայում է սովորողների դերը: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ դասավանդողն առաջատար դերում չէ. նրա դերը կրթական գործունեությունը դեպի դասի նպատակի իրականացում ուղղորդելն է: Դասավանդողը մշակում է նաև դասի պլանը (այն սովորաբար կազմվում է ինտերակտիվ վարժություններից և առաջադրանքներից, որոնց կատարման ընթացքում ուսանողը սովորում է նյութը):

Հետևաբար, ինտերակտիվ դասերի հիմնական բաղադրիչներն են ինտերակտիվ վարժությունները և առաջադրանքները, որոնք կատարվում են սովորողների կողմից: Ինտերակտիվ վարժությունների և սովորական հանձնարարությունների տարբերությունն այն է, որ կատարելով դրանք՝ սովորողը ոչ միայն ամրապնդում է

արդեն յուրացված նյութը, այլև , յուրացնում է նոր նյութը:

Մխենա 3, Ինտերակտիվ մեթոդ



#### 4. Ուսուցման նախագծային մեթոդ<sup>2</sup>

Կարճաժամկետ և երկարաժամկետ նախագծերում աշխատելիս սովորողները ձեռք են բերում նոր գիտելիքներ ու հմտություններ: Նրանք ստանում են այս կամ այն առաջադրանքը, ձևավորում խմբեր, ապա դասարանում և տանը կազմակերպում են նախագծի կատարման աշխատանքները: Որպես նախագծի ամփոփում՝ ներկայացնում են կոնկրետ արդյունքներ՝ տեսանյութ, աշխատանքի ցուցադրություն, համակարգչային ծրագրի յուրացում, հետազոտության փորձ և այլն: Նախագծի կատարման ընթացքը վերահսկվում է դասավանդողի կողմից, ով հետևում և մասնակցում է աշխատանքներին: Նախագծային աշխատանք կատարելը հարմար է հատկապես նախագծեր իրականացնելիս, որովհետև ժամանակ կա ուսումնասիրություն անելու:

#### Նախագծին ներկայացվող պահանջներ

Նախագիծը պիտի ունենա.

<sup>2</sup> <https://dpir.mskh.am/hy/node/533>



.թեմա և ուսումնասիրման ենթակա թեմայի հետ կապված հարցադրումներ  
.աշխատաքի փուլեր (նախնական պլանավորում, գործողությունների ծրագիր, ժամկետներ, միջանկյալ հաշվետվություններ)

.աշխատանքի վերջնաժամկետ

.ակնկալվող արդյունք (հրապարակախոսություն, տեսաֆիլմ, ձեռնարկ, փաթեթ, շտեմարան, հոդված, ներկայացում, և այլն):

Նախագիծն իրականացնելիս պարզվեց, որ պիտի հստակեցվի նաև սովորողների հետազոտական աշխատանքին ներկայացվող պահանջները: Ահա դրանք.

.տեքստի վերլուծում, բովանդակության քննարկում, եզրակացության ձևակերպում, ասված խոսքի հիմնավորում, ստեղծական մտածողության առկայություն

.մասնագիտական բառարանների, գիտահանրամատչելի, հանրագիտարանային գրականության, Վիքիդարանի և հանրագիտարանային հայալեզու, ինչպես նաև օտարալեզու կայքերի գործածում

.կարդացած տեքստերի համադրում, դրանց տարբերությունների քննարկում, եզրակացություն-հետևություն անելու առնվազն փորձ:

## Ինչպես սկսել նախագիծը

Նախագիծը սկսվում է մասնակիցների մոտիվացիայից: Մասնակիցներին հնարավորություն տվեք զգալու՝ ինչ ասել է իսկական թիմ, գրի առեք և քննարկեք յուրաքանչյուր մասնակցի արտահայտած գաղափար կամ միտք: Նախագծային աշխատանքներ իրականացնելու ընթացքում այդ երկխոսությունը անհրաժեշտ պայման է:

Սովորողի կարծիքը հաշվի առնելը սկզբունք է, որն անպայման հարկավոր է հաշվի առնել: Սովորողների հետ միասին աշխատանքային ուղեցույց ստեղծեք, աշխատեք համատեղ ստեղծված աշխատանքային կանոնների համաձայն: Ընդհանուր համաձայնության եկեք աշխատանքի ընթացքում առաջացած դժվարությունները հաղթահարելիս: Հաշվի առնելով մասնակիցների նախասիրություններն ու բնական հատկությունները՝ կատարեք աշխատանքի հնարավորինս հստակ բաժանում:

Նախագծի ղեկավարը կատարում է նախագծի նախնական պլանավորում, ապահովում է առաջնային գիտելիք պարունակող տեղեկատվությունը, որը

կողմնորոշում է սովորողներին՝ ինչպես, ինչ ուղղությամբ սկսել աշխատանքը, տալիս է համացանցային հղումներ, գրքերի անուններ և այլ անհրաժեշտ նախնական տեղեկություն: Հետևում է նախագծի աշխատանքի ընթացքին և ավարտին է հասցնում նախագիծը՝ վերջնական արտադրանքի տեսքով:

Առարկայական ուսուցիչն ապահովում է մասնագիտական խորհրդատավություն սովորողին: Օգնում է որոնել տեղեկատվական գրականություն, այլ նյութեր, մեդիանյութեր, օգնում է կոնկրետ հարցեր լուծելիս առաջացած դժվարությունները հաղթահարել, փոխանցել համապատասխան հմտություններ:

Նախագծային աշխատանքը հետաքրքիր է նաև նրանով, որ ընդհանուր գործ կատարելիս սովորողներն էլ ավելի են մտերմանում, փորձում են օգտակար լինել իրար, ընկերանում են, իրար ուսումնասիրում-բացահայտում են, իրարից սովորում են, գնահատում են «ընկերություն» կոչվածը, հասկանում են դրա առավելությունները: Մի խոսքով՝ նախագծի վրա աշխատելու ընթացքում առավել ցայտուն են դառնում սովորողի ունակությունները:

## Գլուխ 2

### **Տեղեկատվական տեխնոլոգիաները՝ որպես օտար լեզուների դասավանդման կարևորագույն գործիքներ**

21-րդ դարը համակարգչային տեխնոլոգիաների դար է: Ժամանակակից երեխան ապրում է էլեկտրոնային մշակույթի դարում: Տարրական և հիմնական դպրոցում անհնար է դասավանդել առանց հասանելի և դյուրամարս տեսանյութերի:

Առաջանում են մի շարք խնդիրներ. որտեղ գտնել և ինչպես ներկայացնել նյութը:

Այստեղ օգնության է գալիս համակարգիչը՝ համացանցը: Ավանդական «ուսուցիչ-աշակերտ-դասագիրք» սխեմային ավելանում է մի նոր օղակ՝ համակարգչային ուսուցում: Հետևաբար ուսուցիչը պետք է տիրապետի ժամանակակից կրթական հմտություններին, տեղեկատվական տեխնոլոգիաներին, այսինքն՝ լինի մեդիագրագետ:

Կրտսեր դպրոցը կրթության այն հիմնաքարն է, որից ակնհայտորեն կախված է երեխայի հետագա ուսուցումը: Սա տարրական դպրոցի ուսուցչի համար մեծ պատասխանատվություն է ստեղծում: Նրա խնդիրն է հանդիսանում ոչ միայն կարդալ ու գրել սովորեցնել, այլ նաև երեխայի հոգևոր դաստիարակությամբ զբաղվել, բացահայտել նրա լավագույն որակները: Հենց վերջինն էլ հատկապես կարևոր է այժմյան արագ փոփոխվող, տեղեկատվությամբ հեղեղված աշխարհում: Պետք է սովորեցնել երեխային աշխատել տեղեկատվության հետ, **սովորեցնել սովորել:**

Ակադեմիկոս Ա. Պ. Սեմյոնովի հայտարարությունը, թե՛ «ժամանակակից դպրոցի կարևորագույն խնդիրն է սովորեցնել մարդուն ապրել տեղեկատվական աշխարհում», պետք է որոշիչ լինի յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքում: Կրտսեր դպրոցականների ուսումնական գործընթացում SՀS-ների օգտագործման նպատակահարմարության մասին են խոսում նրանց տարիքային այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են տեսողական - պատկերավոր մտածողության զարգացումը՝ բանավոր և տրամաբանական մտածողության համեմատ, ինչպես նաև անալիզատորների անհավասար եւ ոչ բավարար զարգացումը, որոնց շնորհիվ են երեխաները ընկալում ինֆորմացիան՝ դրա հետագա մշակման համար: Եթե տեղեկատվությունը չի ընկալվել, ապա այն չի կարող հասկանալի, յուրացված լինել, չի կարող դառնալ անհատի սեփականությունը, նրա մշակույթի տարրը:

Տարրական և հիմնական դպրոցի երեխային տրված արդյունքներից մեկը պետք է լինի նաև ժամանակակից համակարգչային տեխնոլոգիայի իմացությունն ու հմտությունը, վերջինիս կիրառումը ինքնակրթության համար: SՀS-ի կիրառումը տարրական և հիմնական դպրոցում, աշակերտին հնարավորություն է տալիս հմտացնել կողմնորոշվելու, փոխանակելու և տիրապետելու կարողությունը տեղեկատվական աշխարհում: SՀS-ի կիրառումը տարրական և հիմնական դպրոցում հանգեցնում է բացատրողական-նկարագարդ մատուցման փոխարինմանը՝ կիրառականով: Աշակերտը դառնում է ակտիվ մասնակիցը ուսուցման գործընթացում, իսկ ուսուցիչը՝ հանդես է գալիս որպես օգնական, խորհրդատու, խրախուսում անհատականությունը, նախաձեռնությունն ու անկախությունը: Նյութի մատուցումը SՀS տեխնոլոգիաների միջոցով ավելի էմոցիոնալ, մատչելի և գրավիչ է դարձնում նյութը, իսկ աշակերտին տալիս է կառավարելու և ինքնակառավարվելու հմտություն:

SՀS-ն տալիս է հնարավորություն արագ կատարել փոփոխություններ ու լրացումներ, պահպանել տեղեկատվությունն ու միաժամանակ հասանելի մնալ:

Համակարգչային թեստերի արդյունքում ուսուցիչը հնարավորություն է ստանում արագ գնահատելու աշակերտի կողմից ստեղծված նյութերը: Այս մեթոդը հնարավորություն է տալիս պարզորոշ տեսնել յուրացման արդյունքը յուրաքանչյուր աշակերտի, առարկայի, դասարանի կտրվածքով և պատկերացում կազմել կրթական որակի մասին: Մեթոդը հնարավորություն է տալիս նաև ուսուցումը դարձնել մատչելի և հասանելի ուսուցման գործընթացի բոլոր մասնակիցների համար: SՀS-ն նպաստում է նյութի յուրացման, ամրապնդելու գործընթացը, աշակերտին ներգրավում ուսուցանվող նյութի մեջ: SՀS-ն օգտագործում են և՛ նոր նյութ մատուցելու, և՛ ամրապնդելու, կրկնելու, և՛ ծնողական հավաքների, և՛ դպրոցական միջոցառումների ժամանակ: Աշակերտների ներգրավումը նախագծման և հետազոտական գործունեության մեջ նպաստում է խոսքի զարգացմանը, խթանում ստեղծագործական միտքի դրսևորումը: Ուսուցիչն իր գործունեության ողջ ընթացքում դառնում է սովորողի գործընկեր:

Կից ներկայացնում են մի քանի վարժություն, որոնք ինքս կիրառել են իմ դասապրոցեսի ընթացքում, էլ ավելի արդյունավետ ու պատկերազարդ դարձնելով քերականական նյութը:

<https://learningapps.org/watch?v=pjxcwj45520>

<https://learningapps.org/watch?v=p8i6wixtk20>

<https://learningapps.org/watch?v=pc7q3igd520>

<https://learningapps.org/watch?v=pduhp1ve320>

Իհարկե նման աշխատանքներ կատարելի մեծ ուշադրություն են դարձնում աշակերտների առողջությանը, ներառում ֆիզիկական և դինամիկ դադարներ, աչքերի հանգստացնող մարզանք:

SՀS-ի կիրառման մեծագույն առավելությունը համարում են ուսուցչի ինքնակրթությունն ու ինքնազարգացումը, անդադար փնտրելու ցանկությունը, քանի որ սա շատ կարևոր բաղադրիչ է ժամանակակից ուսուցչի մասնագիտական գործունեության մեջ:

Այսօր<sup>3</sup> SՀS –ների լայնածավալ կիրառումը իր տեղն է գտնում առաջին հերթին դասին: Կրտսեր և հիմնական դպրոցի ինֆորմատիկացիան կարևոր դերակատարություն ունի կրթության ժամանակակից որակի և 21-րդ դարի երեխայի տեղեկատվական մշակույթի ձևավորման համար: Այստեղից էլ բխում են SՀS-ների օգտագործման նպատակները.

<sup>3</sup> <https://dpir.mskh.am/hy/node/769>

- .բարձրացնել սովորելու մոտիվացիան /շարժառիթը/
- .մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը
- .նպաստել սովորողների ճանաչողական կարողությունների խթանմանը
- .բարելավել դասի անցկացման մեթոդները
- .ժամանակին համակարգել ուսուցման և դաստիարակության արդյունքները
- .պլանավորել և համակարգել սեփական աշխատանքը
- .օգտագործել այն որպես ինքնակրթության միջոց
- .արագ և որակյալ պատրաստվել դասին:

## **1.Տարրական կրթության ինֆորմատիզացիայի հիմնական ուղղությունները.**

Տարրական կրթության ինֆորմատիզացիան ընթանում է հետևյալ ուղղություններով.

.ՏՀՏ-ների օգտագործումը որպես ուսուցման դիդակտիկ միջոցներ /դիդակտիկ միջոցների ստեղծում, տարբեր առարկաների համար պատրաստի համակարգչային ծրագրերի մշակում և օգտագործում, աշխատանքի մեջ ինտերնետ-ռեսուրսների օգտագործում և այլն/:

.Ղասի կազմակերպում ՏՀՏ-ների օգտագործմամբ / ՏՀՏ-ի օգտագործում դասի տարբեր փուլերում, գիտելիքների ամրապնդման և ստուգման համար, խմբային և անհատական աշխատանքի կազմակերպում, աշխատանք ծնողների հետ/:

.Կրտսեր դպրոցականների նախագծային աշխատանքների իրականացում ՏՀՏ-ների օգտագործմամբ:

.ՏՀՏ-ների օգտագործման հնարավորությունների շառավիղը բավականին լայն է: Իհարկե, աշխատելով կրտսեր դպրոցականների հետ, անհրաժեշտ է հիշել պատվիրանը՝ «Մի վնասիր»:

.Ուսումնական գործընթացի կազմակերպումը տարրական դպրոցում առաջին հերթին պետք է խթան հանդիսանա սովորողների ճանաչողական կարողությունների ակտիվացման, ուսումնական նյութի հաջող յուրացման համար և նպաստի սովորողի հոգևոր զարգացմանը:

Հետևաբար, ՏՀՏ-ն պետք է կատարի որոշակի կրթական գործառույթ, օգնի երեխային կողմնորոշվել տեղեկատվության հեղեղի մեջ, ընկալել այն, հիշել, և ոչ մի դեպքում չվնասել առողջությունը: ՏՀՏ միջոցները պետք է գործեն որպես ուսումնական գործընթացի օժանդակ տարր, այլ ոչ հիմնական:

- Հաշվի առնելով կրտսեր դպրոցականի հոգեբանական առանձնահատկությունները, ՏՀՏ-ների հետ աշխատանքը պետք է հստակ մտածված և չափավորված լինի: Այդպիսով, ՏՀՏ-ի օգտագործումը դասին պետք է կրի նուրբ բնույթ: Ուսուցիչը, դասին նախապատրաստվելիս պետք է հանգամանորեն մտածի ՏՀՏ-ի օգտագործման նպատակի, տեղի և ձևի մասին:

## **2.ՏՀՏ-ների օգտագործման հիմնական**

**առանձնահատկությունները, որոնք կօգնեն ուսուցչին դասի ժամանակ ստեղծել բարենպաստ պայմաններ և հասնել նյութի յուրացման բարձր մակարդակի.**

.դիդակտիկ նյութերի ստեղծում և նախապատրաստում /առաջադրանքների տարբերակներ, աղյուսակներ, սխեմաներ, գծագրեր, ցուցապաստառներ և այլն/

- ուսումնական նյութի վերաբերյալ պրեզենտացիայի /շնորհանդես/ ստեղծում
- պատրաստի ծրագրային արտադրանքի օգտագործում
- դասին նախապատրաստվելու, արտադասարանական միջոցառումների, ինքնակրթության համար ինտերնետ ռեսուրսների փնտրում և օգտագործում
- կրթության և դաստիարակության արդյունքներին հետևելու համար մոնիթորինգի ստեղծում
- տեքստային աշխատանքների ստեղծում
- մեթոդական փորձի ընդհանրացում էլեկտրոնային տեսքով:

SՀS-ների օգտագործմամբ ուղեկցվող դասերը իրենց պարզության, գեղեցկության և տեսանելիության շնորհիվ ուսումնական նյութի ընկալման ընթացքում առավել մեծ տպավորություն են թողնում սովորողների հոգեբանա-հուզական ֆոնի վրա:

Մուլտիմեդիան նյութի և գործընթացների ներկայացումն է ոչ թե ավանդական տեքստային նկարագրությամբ, այլ ֆոտոնկարների, տեսանյութերի, գծագրերի, շարժանկարների, ձայնի օգնությամբ: Դասի անցկացումը մեդիայի շնորհիվ գրավում է կրտսեր դպրոցականներին: Այդ տիպի դասերի ընթացքում դասարանում ստեղծվում է իրական շփման իրավիճակ, որի ժամանակ երեխաները ձգտում են իրենց մտքերն արտահայտել սեփական բառերով, հաճույքով են կատարում առաջադրանքները, ուսումնական նյութի հանդեպ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում:

### **3. SՀS-ի օգտագործումը դասի տարբեր փուլերում.**

- .սովորողների նախապատրաստում նոր նյութի յուրացմանը
- .նոր նյութի յուրացում
- .նոր նյութի ամրապնդում
- .դասի ամփոփում
- .տնային առաջադրանք:

### **4. Մեդիադասերը օգնում են լուծել հետևյալ դիդակտիկ խնդիրները.**

- .յուրացնել թեմայի վերաբերյալ հիմնական գիտելիքները
- .համակարգել ձեռք բերած գիտելիքները
- .ձևավորել ինքնակառավարման հմտություններ
- .ամբողջությամբ ձևավորել սովորելու շարժառիթ
- .ուսումնամեթոդական օգնություն ցուցաբերել սովորողներին՝ ուսումնական նյութի
- .ստեղծման ինքնուրույն աշխատանքում:

Այս տեխնոլոգիան կարելի է դիտել որպես ուսուցման բացատրական-զննական մեթոդ, որի հիմնական նպատակը ուսումնական նյութի հաղորդման ճանապարհով սովորողների՝ տեղեկատվության յուրացման կազմակերպումն է և դրա հաջող ընկալման ապահովումը, որը ընդլայնվում է, երբ զուգահեռ միանում է նաև տեսողական հիշողությունը:

## **5. Մեդիատեխնոլոգիաները կարող են օգտագործվել՝**

### **1. Թեմայի նշման համար**

դասի թեման ներկայացված է սլայդների միջոցով, որտեղ համառոտ շարադրված են ուսումնասիրվող հարցի հիմնական կետերը:

### **2. Որպես ուսուցչի բացատրությունների ուղեկից**

կարող են օգտագործվել կոնկրետ դասերի համար ստեղծված մեդիա կոնսպեկտ-շնորհանդեսներ, ստեղծելով համառոտ տեքստ, հիմնական բանաձևեր, գծագրեր, նկարներ, տեսանյութեր, անհմացիաներ:

### **3. Որպես տեղեկատու-ուսուցողական ձեռնարկ**

ուսուցման մեջ այսօր հատուկ շեշտադրում է դրվում սովորողի ինքնուրույն գործունեության վրա: Ուսուցիչն այս դեպքում հանդես է գալիս որպես ուսուցման պրոցեսի կազմակերպիչ, սովորողների ինքնուրույն գործունեության ղեկավար, ով անհրաժեշտ օգնություն և աջակցություն է ցույց տալիս:

### **4. գիտելիքների ստուգման համար**

համակարգչային թեսթավորման օգտագործումը բարձրացնում է ուսումնական պրոցեսի արդյունավետությունը, ակտիվացնում է դպրոցականների ճանաչողական գործունեությունը: Թեսթերը կարող են լինել հարցաշարերի տարբերակով, որոնց պատասխանները սովորողը գրառում է տետրում կամ հատուկ բլանկի վրա: Այսպիսով՝ անհերքելի է S<S-ի դրական դերը ժամանակակից դասապրեցեսոմ:

## **Եզրակացություն**

Շատ կարևոր է ուսուցման փուլային պլանավորումը: Մենք հաճախ մտածում ենք, որ ուսուցումը տեղի է ունենում գիտելիքի փոխանցում-գիտելիքի յուրացում մեխանիզմով: Մինչդեռ իրականում սովորելու գործընթացը փուլային է: Եվ ուսուցումը տեղի է ունենում աստիճանական ձևով: Այս աստիճանակարգումը ուսուցիչներին հնարավորություն է տալիս ուշադրության կետրոնում պահելու, թե ինչ



չափով են աշակերտները կարողանում կապակցել գիտելիքը և դրա հիման վրա ստեղծել նոր գիտելիք: Այս աստիճակարգման հարցում մեզ կրկին օգնության են գալիս տեղեկատվական տեխնոլոգիաները: Ձեռագրերի ստեղծումից հետո, առաջին քայլերը դեպի տեղեկատվական հասարակություն, հատկանշվեցին էլեկտրական հեռագրի, այնուհետև հեռախոսի և ռադիոհեռախոսի միջոցով, մինչդեռ հեռուստատեսությունը, Ինտերնետը, ավելի ուշ բջջային հեռահաղորդակցումը և GPS-ը ասոցացրեցին պատկեր, տեքստ և «առանց լար» բառերը: Այսօր Ինտերնետը և հեռուստատեսությունը դարձել են հասանելի բջջային հեռախոսների վրա. վերջինս ծառայում է նաև որպես ֆոտոխցիկ: Ուրեմն կարող ենք այն ծառայեցնել նաև հաջողված դաս ունենալու համար: Հենց հեռախոսի օգնությանը դիմելով բազմաթիվ անգամներ իրականացրել են գիտելիքի ստուգման խաղային մի քանի ձևեր, դրանցից մեկը կոչվում է kahoot!

Այսպիսով, մեդիատեխնոլոգիաները հարստացնում են ուսուցման պրոցեսը, թույլ են տալիս ուսուցումը դարձնել ավելի արդյունավետ, նաև նպաստում են սովորողի ստեղծագործական զարգացմանը: S<S-ների օգտագործումը չի դադարում տարածվել հատկապես հարուստ երկրներում, բայց միշտ կա վտանգ՝ շեշտադրելու սոցիալական և թվային բեկումը, ինչպես նաև սերունդների միջև անջրպետը: Տեխնոլոգիաների միջոցով հնարավոր է վերացնել այն խոչընդոտները, որոնց հանդիպում են աշակերտներն ու ուսուցիչներն ամբողջ աշխարհում: Հզոր ծրագրերն ու Համացանցը փոխում են գիտելիքներ ձեռք բերելու մեր ուղիներն ու հնարավորությունները: Դասավանդման և ուսուցման նորարարական եղանակները վերափոխում են նաև դասարանում դաս անցկացնելու գործելակերպը: Ավելին, տեխնոլոգիաներն ուսանողներին նոր պահանջներ են ներկայացնում. հիմնական կարողություններից բացի, նրանք պետք է ունենան 21-րդ դարում պահանջվող բոլոր հմտությունները՝ համագործակցության, հաղորդակցման և տեղեկատվական կառավարման կարողություններ, ինչպես նաև նրանց պետք է հասանելի լինեն ուսմանն օժանդակող այն բոլոր միջոցները, որոնք հնարավոր են դարձնում այդ կարողությունների օգտագործումը:

Հանրակրթության համակարգում կարևոր օղակ է տարրական դպրոցը, որի նպատակը կրտսեր դպրոցականների մտավոր, հոգեկան գործընթացների, ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության զարգացումն է, հայեցի հոգեկերտվածքի և արժեհամակարգի ձևավորումը: Նշված նպատակների արդյունավետ իրականացման գործընթացում կարևոր է տարրական դպրոցի ուսուցիչը, ում մասնագիտական պատրաստությամբ, կոմպետենտությամբ և աշխատանքի որակով է նաև պայմանավորված մեր հասարակության առաջընթացը:

Տարրական դպրոցի ուսուցիչը միաժամանակ պատասխանատու է երեխայի առողջության և կյանքի, գիտելիքների յուրացման մակարդակի, կարողությունների և հմտությունների ծնավորման, նրա սոցիալականացման, կրթության շարունակականության ապահովման համար: Ուստի ՝ չափազանց կարևոր է մ համարում ուսուցչի կողմից ճիշտ տեխնոլոգիաների ընտրությունը:

## Գրականության ցանկ

1. Սերոբ Խաչատրյան, Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020:
2. Գ.Ե.Ղույունյան, «Մանկավարժություն», գիրք 1-ին, էջ 14, Երևան, 2005 թ:
3. [https://hy.wikipedia.org/wiki/%D5%88%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6\\_%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80](https://hy.wikipedia.org/wiki/%D5%88%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6_%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80)
4. <https://dpir.mskh.am/hy/node/769>
5. <file:///C:/Users/ArtMeri/Downloads/ARM-State-of-ICT-Industry-2013.pdf>
6. [https://hy.wikipedia.org/wiki/%D5%8F%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%BF%D5%BE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6\\_%D5%BF%D5%A5%D5%AD%D5%B6%D5%B8%D5%AC%D5%B8%D5%A3%D5%AB%D5%A1%D5%B6%D5%A5%D6%80](https://hy.wikipedia.org/wiki/%D5%8F%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%BF%D5%BE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%BF%D5%A5%D5%AD%D5%B6%D5%B8%D5%AC%D5%B8%D5%A3%D5%AB%D5%A1%D5%B6%D5%A5%D6%80)
7. Александр Латкин. Технологии, которые изменили мир — М.: «Манн, Иванов и Фербер», 2013.